

ՏԵՂԱՔԱՆՈՒՄԹՆԵՐԸ ԵՒ ՍԱԼԱՄԷ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՂԱՄԻՆ ՎՐԱՅ

Վարչապետի պաշտոնակատար Նեժիպ Միքաթիի հրա-



կան թղթածրարին մասին, Միքաթի մարդկային և իրա- ղապատության հարցերը

Նշենք, որ Լիբանանի Վճռաբեկ ատենակի ընդհանուր



ճերբակալելու մասին Ինքնիշխանի հարդոլումին համա-

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԶՐԱՄԱՅԱԿԱՆ Ե



Ազգային ազատ հոսանքի նախագահ Ժըպարան Պասիլ

րիչ Ռիատ Սալամեի հետապնդումը ֆրանսական արդա- ղապատության կողմէ:

ՏԵՂԱՔԱՆՈՒՄԹՆԵՐԻ ՍԳՐԱԿԱԾ ՏՈՒՆՆԵՐ

Սուրիացի տեղահանուածներու թղթածրարին անհու- ղամբ,



րելի պաշտոնակատար գործարար Էլիաս Պէյսարի յայտ- նեց,

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ ԶԿԱՆ

Բնակարանային վարկերու հանրային հաստատութեան տնօրէն

ՄԻԵԱԹԻ՝ ՀԸՉՊԱՍԼԱՅԻ ՄԱՍԻՆ

Վարչապետի պաշտոնակատար Նեժիպ Միքաթի ընդու- նեց

«ՄԵԹԱ»-Ի ՆԿԱՏԱՄԱՐ ՄԵԾ ՏՈՒՂԱՆԵ

«Ուացափ», «Ֆէյսպուք», «Ինսթաքրամ» եւ ընկերային հաղորդակցու- թեան ու համացանցային այլ կիրառողսերնո տեփականատեր

ՓԱՇԻՆԵԱՆ.

«ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ ԿԸ ՆԵՐԱՌԷ ՆԱԵՒ ԱՐՅԱՆԸ»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան երկ օրուա մամլոյ ասուլիս մը,



իրաւունքներու եւ անվտանգութեան հարցը պետք է քնն- նարկուի Պաքու-Ստեփանակերտ ձեւաչափով», ըսաւ Հա- յաստանի վարչապետը:

Հայաստանի վարչապետը շեշտեց, որ Ատրպէյճանի 86.600 քառակուսի քիլոմէթր տարածքին մէջ ներառուած են այն ներգաւառները,

Փաշինեան պատմեց, որ 2020-ի Նոյեմբեր 9-ի յայտա- րարութեան մէջ կետեր եղած են Հայաստանի տարածքով միջանցք տրամադրելու եւ ներգաւառներու մասին,

Անդրադառնալով Մեղրիի մօտ ռուս խաղաղապահնե- րու իրականացուցած աշխատանքներուն, Փաշինեան խոս- տացաւ ստուգել այդ գործունէութիւնը, որպէսզի չխախտէ Հայաստանի գերիշխանութիւնն ու ազգային անվտանգու- թիւնը:

Փաշինեան նոյնիսկ յայտնեց, որ հայ գերիներուն 90 առ հարիւրը գերեվարուած է ռուս խաղաղապահներու պա- տախանաստութեան գօտիին մէջ:

ԲՈՒՆՈՒԹԻՒՆ ԲՆԱԿԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՒՂԱՅՈՒՆ



(Ծառ.ը տեսնել 4րդ էջ)

ՎՃՌՈՐՈՇ ԶՕՐԱԿՅՈՒԹԻՒՆ ԷՐՏՈՂԱՆԻՆ

Կիրակի, 28 Մայիսին, Թուրքիոյ մէջ տեղի պիտի ունենայ նախագահական ընտրութեան երկրորդ փուլը,

Այլ գիծի վրայ, Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Խուլուսի Աքար յայտնեց, որ «Անգարա Սուրիոյ եւ Իրաքի

ՊՐԻՔՍԵԼԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ ԵՄ ԱՆՁԱԴՊԱՏՈՒԹԵԱՆ

Պրիքսելի մեջ տեղի ունեցավ Եւրոպայի խորհուրդի նախագահ Շարլ Միշելի հրավերած հերթական հանդիպումը՝ Հայաստանի վարչապետին և Ատրպեյճանի նախագահին մասնակցությամբ։ Միշելի նախաձեռնած նախորդ նման հանդիպումին կը մասնակցեր նաև Ֆրանսայի նախագահ Էմանուել Մաքրոնը։ Այդ հանդիպումի ընթացքին էր, որ առաջին անգամ ըլլալով հրապարակ եկաւ Հայաստանի սահմանները Եւրոպացի դիտորդներ ուղարկելու գաղափարը, որուն չընդդիմացաւ Իլիամ Ալիևը, պայմանաւ որ այդ առաջընթացը ըլլայ կարծաժամկետ։ Ինչպէս գիտենք, Եւրոպացի դիտորդները երկու ամիս մնալէ ետք մեկնեցան Հայաստանէն, սակայն կարծ ժամանակ ետք, անոնք վերադարձան աւելի մեծ թիւով ու երկարաժամկետ, առանց նկատի առնելու Ատրպեյճանի բարձրացուցած բողոքները։

Շարլ Միշել փորձ կատարեց նման քառակողմ հանդիպում մը եւս կազմակերպել, սակայն այդ գաղափարը արժանացաւ Պաքոյի մերժումին՝ Ֆրանսան մեղադրելով Հայաստանի ի նպաստ կողմնակալութեան մէջ։ Հայաստան ակնդէ Ֆրանսայի ներկայութեան վրայ ու այդպիսով պրիքսելեան հանդիպումները ժամանակ մը առկախուեցան։

14 Մայիսին կայացած այս վերջին հանդիպումը վերադարձ էր եռակողմ ձեւաչափին։ Հայաստան այս գիշումին գնաց՝ ստանալով հաւաստիացում, որ յաջորդ հանդիպումը տեղի պիտի ունենայ Յունիս 1-ին, Ֆրանսայի եւ Գերմանիոյ ղեկավարներուն մասնակցությամբ՝ Մոլտաւիոյ մայրաքաղաք Քիշինիւի մէջ կայանալիք Եւրոպական Քաղաքական Համայնքի գագաթի ժողովին առջնութեամբ։

Հայաստանի համար խիստ կարեւոր է Եւրոպական այլ երկիրներու մասնակցութիւնը նման հանդիպումներու, որպէսզի Ատրպեյճանի չկարողանայ իր ցանկացած ձեռքով ներկայացնել բանակցութիւններու բովանդակութիւնը ու տարբեր պատրուակներով հրաժարի գործարքէ գոյացած համաձայնութիւնները։

Պրիքսելեան հանդիպումէն քանի մը օր առաջ սահմանային Սոթքի շրջանին մէջ Ատրպեյճանի զինուած ուժերը ռազմական գործողութիւններ նախաձեռնելով փորձ կատարեցին զետնի վրայ յաջողութիւններ արձանագրելով Հայաստանին պարտադրել սոր պայմանները։ Այս անգամ բախելով հայկական բանակի ուժգին հակահարուածին, Պաքոյի այս փորձը մատուցեալ ձախողութեամբ։

Վերադառնալով պրիքսելեան հանդիպումին, կարելի է ընել, որ յառաջընթացի մասին խօսիլը կանուխ է։ Ստորագրուած փաստաթուղթի բացակայութեան, արդիւնքներու մասին տեղեկութիւններ փոխանցեց Միշել ինքը, յայտարարելով որ Հայաստանի եւ Ատրպեյճանի առաջնորդները հաւատարմութիւն յայտնած են Ալմա-Աթայի 1991 թուականի ինչպէսզորի եւ Հայաստանի ու Ատրպեյճանի տարածքային ամբողջականութեան։ Այս անգամ Շարլ Միշել յստակ նշեց երկու երկիրներուն տարածքը՝ Հայաստանի 29 հազար 800 եւ Ատրպեյճանի 86 հազար 600 քառակուսի քիլոմէթրը։ Միշել յայտնեց, որ անդրադարձ եղած է նաեւ Լեռնային Ղարաբաղի հայերու իրաւունքներու ապահովման մասին։ «Ես բարձրաձայնեցի նաեւ Գեորգի Եւ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան միջեւ թափանցիկ երկխոսութեան անհրաժեշտութեան մասին», ըսաւ Եւրոպայի խորհուրդի նախագահը՝ աւելցնելով, որ շաքաթներու ընթացքին պետք է ազատ արձակուիլ բոլոր ռազմագերիները։

Այսպիսով, պրիքսելեան հանդիպումի առաջին քննութիւնը պայմանաւորուած է ռազմագերիներու ազատ արձակմամբ, որ պետք է իրականացուի կարծ ժամանակուայ ընթացքին։ Այս անգամ եւս հաւանականութիւնը մեծ է, որ Ատրպեյճան չկատարէ կամ մասամբ կատարէ գայն, ազատ արձակելով փոքր թիւով հայ պատանդներ, այդպիսով իսկ ձախողութեան մատնելով բանակցային այս վերջին գործընթացը եւս։ Իսկ քիչեր կը հաւատան, որ Ատրպեյճան դուրս կու գայ Հայաստանի 29 հազար 800 քիլոմէթր տարածքէն առանց ռազմական միջոցներու պարտադրանքին, որոնք նախանշանները յուսադրող են։

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»

ԻՏԱԼԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԻ ԱՌՁՁԻՆ ՆԻՍՏԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՆ ՇԱՔԲ ՄԸ ՅԱՐԱՎՆՈՑ ԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատգամաւորներու պալատի Կիսանդրիներու դահլիճին մէջ Իտալիա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խումբը գումարած է իր առաջին նիստը՝ Իտալիոյ մէջ Հայաստանի դեսպան Ծովինար Համբարձումեանի մասնակցությամբ։



Իտալիոյ մէջ Հայաստանի դեսպանութեան Ֆեյսալուքի էջը կը տեղեկացնէ, որ քննարկուած հարցերու շարքին էին խորհրդարանական դիւանագիտութեան կարեւորութիւնը, միջազգային ասպարեզին մէջ համագործակցութիւնը, Եւրոպական օրենսդրութեան կիրառման եւ երկու պետութիւններուն մէջ գործող օրենսդրական դաշտերուն հետ առնչուող հարցեր։ «Հնագոյն քաղաքակրթութիւններու հիման վրայ ձեւաւորուած ընդհանուր պատմական արմատներ ունեցող երկու երկիրները բազմաթիւ առնչութիւններ ունեցած են դարերու ընթացքին։ Մեծ թիւով հայեր հաստատուած են Իտալիոյ մէջ՝ ձեւաւորելով հայ համայնքի գաղթածախներ երկրի տարբեր մասերուն մէջ։

«Հանդիպման ընթացքին քննարկուած են շարք մը յաւակնոտ նախագիծեր, որոնք նպատակն է աւելի խորացնել եւ ամրապնդել Իտալիոյ եւ Հայաստանի խորհրդարաններու միջեւ թուիկիական ծրագրի շրջանակներուն մէջ երկկողմ համագործակցութիւնը, յայտնած է «Լեկա» կուսակցութիւնը ներկայացնող պատգամաւոր, Ֆիւնասական յանձնաժողովին մէջ խմբակցութեան ղեկավար, Իտալիա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խումբի նախագահ ժուլիօ Չեսթեմբոս։

«ՄՈՒՐՈՒԵԼՈՒ ՇԵՏԵՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՅԱՅՏՈՒՄՈՒ ԱՏՐՊԵՅԱՆՅԻՆԵՐ ԱՅՍ ՊԱՀԻՆ ԳՎԱՆ» ԸՍԱԾ Է ՓԱՇԽՆԵԱԼ

Հայաստանի մէջ այս պահի դրութեամբ չկան ատրպեյճանցիներ, որոնք երկրին մէջ յայտնուած են մոլորութիւն հետեւանքով։ Այս մասին յայտնեց 33 վարչապետ Նիկոլ Փաշինեան։



«Ես կը հաստատեմ, որ կայ ըմբռնում, որ մոլորութիւն հետեւանքով հակառակ կողմը յայտնուած զինուորները, քաղաքացիները պետք է հեշտացուած կարգով վերադառնան։»

(Շար.ը տեսնել Յոդ Էջ)

ԱՆԱԿՆԿԱԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ ՄՈՆԻԹԵՎԻՏԵՈՅԻ ՄԷՋ

15-18 Մայիս 2023 թուականին, աշխատանքային այցով մը հիւրաբար քաղաքս կը գտնուէին Դոկտ. Աբել Քիւնյ. Մանուկեան ու ՄԴԳԿ Կեդրոնական Վարչութեան նախագահ անդամ Ընկ. Վագգէն Գալթաբեքեանը։ Իրենց ներկայութիւնը քաղաքս մէջ ուրախադիր անակակալ եւ միաժամանակ եզակի հաճոյք մըն էր Մոնիթօվիտօյի ՄԴԳԿ մասնաճիւղի բոլոր անդամներուն համար։ Ոգետրութիւնը մեծ էր, քանի որ անոնք առաջին անգամ չէր, որ կը գտնուէին Մոնիթօվիտօ, ուստի քաջածանօթ էին հայ համայնքի անդամներուն, որոնցմէ շատերուն հետ բարեկամական շերտ կապեր արդէն իսկ հաստատած էին։



Հակառակ անոր, որ անոնք աշխատանքային անձնական առաջընթացով ժամանած էին, սիրով ընդունեցին ՄԴԳԿ-ի Վարիչ Մարմինի հրաւերը՝ Հնչակեան կեդրոն այցելելու եւ այնտեղ վարչականներու եւ այլ բարեկամներու հետ ընկերային մտերմիկ հանդիպում եւ հաճելի ժամանակ մը ունենալու նպատակով։

Երեկոն իր ներկայութեամբ կը պատուէին նաեւ Ուրուկուէյի առողջապահութեան փոխնախարար Խոսէ Լույս Սաչեան եւ Հայոց Թեմի առաջնորդ Գեորգ. Տ. Յակոբ Արք. Գլընձեանը։ Յուզիչ էր սրբազան հոր հանդիպումը Դոկտ. Աբել Քիւնյ. Մանուկեանին հետ, քանի որ անոնք իրենց պատանեկութեան տարիները միասին անցուցած էին Էջմիածնի Յոգեդո ճեմարանէն ետք, ապա ձեռնարդուած էին հոգեւորական ու մեկնած աստուածաբանական իրենց բարձրագոյն ուսումը ստանալու համար մին Գերմանիա, իսկ միւրը Աւստրիա՝ Վիեննայի Պետ. Համալսարան։

Համադամ ուտելիքներու եւ տեղական ճոխ ուտեստներով բեռնաւորուած սեղանը, քնակաւաբար, կը ստեղծէր բարձր տրամադրութիւն, որուն շուրջ ներկաները կը գրուցէին, կը փոխանակէին մտքեր, նաեւ լուրջ մտահոգութիւններ՝ Արցախի հայրութեան ճակատագրին հետ կապուած իրադրութիւններուն, Հայաստանի եւ հայ Սփիւռքի դէմ ուղղուած ծանրագոյն մարտահրաւերներուն վերաբերելով։

Ճաշկերոյթի ընթացքին բարի գալուստի եւ ողջոյնի խօսքով հանդէս եկան Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Տանիլէ Մանուկեանը եւ ատենապիւր, «Արաքս» ռաւթօժամի տնօրէն Ընկ. Տիւրք Գարամանուկեանը։ Ան ուրախութեամբ ներկայացուց ակումբին շէնքին կից բարեգործուած նոր սրահը, որ վերջերս ամբողջապէս վերանորոգուած էր Ուրուկուէյի պետութեան նիւթական աջակցութեամբ։ Ուրուկուէյի հայ համայնքը յաշ պետութեան գնահատուած է ուրուկուէյցիներու կողմէ սիրուած համայնք մըն է, քանի որ ան լիարժեքօրէն համարուած է հասարակութեան ներառանքին խաւերուն մէջ ու անձնորի կը մասնակցի երկրի բարգաւաճման աշխատանքներուն։ Ի դէպ, պետք չէ մոռնալ, որ Ուրուկուէյ առանցիկ հանդիսացած է 1965 թուականին ճանչնալու 1915 թուականի Հայոց ցեղասպանութեան պատմական փաստը։

Հունկ խօսք առաւ Ընկ. Վագգէն Գալթաբեքեանը, որ Եւրոպայի միջոցաւ ուրախութիւնը՝ ըսելով, որ արդէն չորրորդ անգամ ըլլալով կը գտնուի Մոնիթօվիտօ, ու ամէն անգամ իրեն համար սեպուի պարտականութիւն մըն է այցելել գաղափարի ընկերներու այս կեդրոնը, ուր հնչակեան համագումարները եւ ազգին ծառայելու սրբազան աւանդը բարձր կը պահուի՝ գայն տր Եւրոպայի նորակալ ինքնութեան սրբազան մասուկց փոխանցելու համար։

Հրաւիրուեցաւ նաեւ Դոկտ. Աբել Քիւնյ. Մանուկեանը, որ հրատարակած էր արժեքաւոր հատոր մը՝ Ժընեւի մէջ Հնչակեան կուսակցութեան կազմաւորման պատմութեան եւ հնչակեան Քսան կախարաններուն մասին անդրադարձը Եւրոպական մամուլի եւ դիւանագիտական թղթակցութիւններուն վերաբերելով։ Ան մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց հրաւերին համար, որունց վարչութիւնը, ներկաները անխտիր, բայց մասնաւորաբար Յակոբ սրբազանը, որպէս իր աղօթակից հոգեղբայրն ու ստեղծագործ գրչեղբայրը։ Տ. Աբել ներկայացուց իր գիրքը՝ բացատրելով անոր ստեղծման շարժառիթը եւ աշխատանքին հետ յառաջացած դժուարութիւնները, որոնք բոլորն ալ յաղթալարուած էին երկարատեւ հետազոտութիւններու շնորհիւ՝ ծնունդ տալով առկա հատորին։ Հետաքրքրական էր տեղեկանալ, որ Հնչակեան կուսակցութիւնը ժընեւի մէջ ոչ թէ հիմնուած էր 1887 թուականի Օգոստոսին, այլ աւելի վաղ՝ 1886 թուականի աշնան ամիսներուն «Յեղափոխական կազմակերպութիւն» անունով։ Կուսակցութիւնը Հնչակեան անունը իւրացուցած է շատ աւելի ուշ շրջանի մը՝ «Հնչակ» թերթի հրատարակութիւնը սկսելէն բաւական վերջ։ Հնչակեան կուսակցութեան հիմնադիր անդամները եղած են ոչ թէ ետքը, այլ՝ վեց կովկասահայ ուսանողներ, որոնք փառապան ճանքով անունները մեր պատմութիւնը այսուհետեւ անթերի եւ առանց օտարամուտ վերագրումներու պիտի արձանագրէ. Ալեքան Եւրապրելեան, Մարօ Վարդանեան-Նագարբեկեան, Ռուբեն Խան-Ազատ, Գաբրիէլ Կաֆեան, Գեորգ Դարաշեան եւ Քրիստափոր Օհանեան։

Ներկաները մեծ հետաքրքրութեամբ ունկնդրեցին Դոկտ. Աբել Քիւնյ. Մանուկեանին զեկոյցը եւ գնահատեցին առկա աշխատանքը երկարատեւ ծափողջնակներով։ Հեղինակը իր գիրքերէն քանի մը օրինակ մակագրելով Լուիդիո Կեդրոնի գրադարանին։

Երեկոն անձանձորեղ ընթացաւ ու իր աւարտին հասաւ հրաժեշտի շերտ խօսքերով, յիշատակի խմբային լուսանկարներով եւ ցնոր հանդիպումներու անկեղծ փափաքով։

ՏԻՒՐԿ ՍԻՊՐԱՆԸՆՈՒԿՆԱԼ

ՄԴԿԿ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱԹԵՆՔԻ ԸՆՏՐԱՇՐՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ՏԻՄԻԹԻՍ ԵԱՆԱԿՈՒՊՈՒԼՈՍԻՆ ՀԵՏ

Ուրբաթ, 19 Մայիս 2023-ին, ՄԴԳԿ Յունաստանի շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Արա Ալբարեանը եւ փոխատենապետ Ընկ. Յովհաննէ Շահինեանը հանդիպեցան Յունաստանի նախկին պետական նախարար եւ կառավարութեան խօսնակ, «ՍԻՐԻՉԱՍ» գլխաւոր ընդդիմադիր կուսակցութեան Աթենքի ընտրաշրջանի խորհրդարանական թեկնածու պարոն Տիմիթրիս Եանապոլուսին հետ։



Հանդիպման ընթացքին քննարկուեցան յունահայ համայնքի, Հայաստան-Յունաստան յարաբերութիւններու, Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան, 21 Մայիսին Յունաստանի համապետական ընտրութիւններուն, ինչպէս նաեւ ապագայ փոխգործակցութեան շուրջ մտքերու փոխանակում։

«ՎԱՏԱՆ ԵՄ, ՈՐ ԱՅՍ ՊԱՅՔԱՐԸ ՕՐ ՄԸ ՊԻՏԻ ՊՄԱԿՈՒԻ ՎԵՐՉՆԱԿԱՆ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ».

ԱՐՅԱԿՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹԵՐՔԻ ՈՐ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ԲՆԱԿԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Արցախի Հանրապետության պետական նախարար Գուրգեն Ներսիսեանը, չորս ոլորտային նախարարներու ուղեկցությամբ, բնակչության հետ հանդիպումներ են անհատական ընդունելություններ կազմակերպած է Մարտակերտի շրջանի Հարթերը եւ Մարտակերտ համայնքներուն մէջ՝ հանրության հետ պատշաճ հաղորդակցութեան ապահովման եւ բնակչութիւնը յուզող ընկերա-տնտեսական ու այլ խնդիրներու ընտանացումն ապահովելով:



ԱՀ կառավարութիւն

Գուրգեն Ներսիսեանը հանրային հանդիպումներուն ընթացքին ներկայացուցած է շրջափակմամբ պայմանաւորուած իրավիճակը եւ կառավարութեան կողմէ իրականացուող ծրագիրները: Ան ընդգծած է, որ այս ծանր պայմաններուն մէջ կառավարութիւնը կ'ընէ առաւելագոյնը՝ հնարաւորինս մեղմելու քաղաքացիներու ընկերա-տնտեսական դժուարութիւնները, որոնք, բարեբախտաբար, չեն կտորներ Արցախի ժողովուրդին ազատատենչ կամքն ու ոգին:

«Մենք մեր տանամետակներու պայքարը կը շարունակենք մեր սեփական հողին վրայ արժանապատուօրէն ու ազատօրէն ապրելու համար, եւ, չնայած տարաբնոյթ մարտահրաւերներուն, վստահ եմ, որ այդ պայքարը օր մը պիտի պսակուի վերջնական յաջողութեամբ: Ատրպէյճանական սպառնալիքներն ու ճնշումները երկար ժամանակ պիտի ուղեկցին մեզի, եւ մենք պէտք է կարենանք տեսական ճգնաժամի պայմաններու մէջ ապահովել մեր գոյութիւնն ու պայքարը: Ուրախ եմ, որ կրցած ենք վերջին շաբաթներուն ռուս խաղաղապահներուն եւ Կարմիր խաչին աջակցութեամբ որոշակիօրէն կարգաւորել մարդասիրական բռնափոխարկումներուն խնդիրը, սակայն կը գիտակցիմ նաեւ, որ այդ մեր բնակչութեան կարիքներուն միայն չնչին մասը կը բաւարարէ», իր խօսքին մէջ նշած է պետական նախարարը:

Գիւղատնտեսութեան առնչուող հարցումներուն ի պատասխան՝ Գուրգեն Ներսիսեան ընդգծած է, որ, չնայած շրջափակման ու բնակլիմայական պայմաններու յարուցած մեծ դժուարութիւններուն, կառավարութիւնը կ'ընէ եւ պիտի ընէ հնարաւորը գիւղատնտեսական աշխատանքներուն աջակցելու եւ պարենային ինքնաբաւութեան մակարդակը բարձրացնելու ուղղութեամբ: Ան ընդգծած է, որ աջակցութեան ու փոխհատուցման լրացուցիչ ծրագիրներ պիտի իրականացուին յատկապէս բնական աղէտներէ տուժած գիւղատնտեսներուն եւ սեփականատէրերուն, որոնց մէջ մասը արդէն կատարուած է:

Հանդիպումներուն ժամանակ ընտանացումն են նաեւ շարք մը հարցեր՝ ապրանքներու գնագոյացման, զբաղւածութեան ապահովման, կենսական ենթակառուցածքներու գործունեութեան, ճանապարհներու բարեկարգման եւ այլ թեմաներու շուրջ: Պետական նախարարը տուած է շարք մը յանձնարարականներ՝ վերահսուած խնդիրներու ուսումնասիրման եւ լուծման ուղղութեամբ:

Գուրգեն Ներսիսեանը ճանապարհին ծանօթացած է նաեւ Սարսանգի ջրամբարի վիճակին՝ ընդգծելով, որ Ատրպէյճանը կը շարունակէ ուժանիւթային ու բնապահպանական ահաբեկչութիւնը՝ խափանուած պահելով Հայաստան-Արցախի ելեկտրամատակարարումը, իսկ Արցախի կառավարութիւնը կը կատարէ բոլոր ջանքերը ելեկտրական ահամակարգի ճգնաժամային արդիւնաւետ կառավարման ուղղութեամբ:

Այլի ընթացքին պետական նախարարին կ'ուղեկցէին Արցախի Հանրապետութեան տարածքային կառավարման եւ ենթակառուցումներու, գիւղատնտեսութեան, քաղաքաշինութեան եւ ընկերային զարգացման ու գաղթի նախարարները:

«ՍԵՐ ԱՐՑԱԽ» ՆԱԽԱԳԻԾԸ ՊԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒԻ ՆՈՅՆԻՍԿ ԱՐՑԱԽԻ ԾՐՋԱՓՈՒԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ»

Կ'ԸՍԵ ԱՆՆԱ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ ԹԵՐԵՈՑ

«Սեր Արցախ»-ը պիտի շարունակէ աջակցիլ շրջափակման մէջ գտնուող արցախցի նորածիններուն՝ լոյս աշխարհի եկած իւրաքանչիւր նորածնի նուիրելով իր առաջին նուէր-տուփը:

Ամերիկաբնակ հայ գրող, բարերար, իրաւաբան, «Աննա Աստուածատուրեան» հիմնադրամի նախագահ եւ «Սեր Արցախ» նախագիծի հեղինակ Աննա Աստուածատուրեան Թերեոթ ըսաւ, որ կը շարունակեն նուէր տուփերը փոխանցել Արցախի Հանրապետութեան եւ Կարմիր խաչի ներկայացուցիչներուն միջոցով:



«2022 թուական Յունիս 1-ին՝ Երեւանէրու պաշտպանութեան միջազգային օրը, 2020 թուականի Արցախեան 44-օրեայ պատերազմէն յետոյ ծնած երեխաները պաշտպանելու եւ անոնց համար որեւէ լաւ բան ընելու ցանկութենէն ելլելով, սկսանք «Սեր Արցախ» նախագիծը: Մեզի համար անչափ կարեւոր էր արժեւորել Արցախի մէջ ապրող ընտանիքներուն մէջ ծնած բալիկները եւ ապագայ մարիկները: Եւ այսօր՝ նախագիծի մեկնարկէ գրեթէ մէկ տարի անց, եւ կրնամ նշել, որ հասցուցած ենք նորածիններուն նուիրել 1553 տուփ», ըսաւ ան:

Աննա Աստուածատուրեան ընդգծեց, որ նախօրոք որոշած էին ծրագիրը իրականացնել մէկ տարի, բայց, քանի որ այս պահին Արցախը կը գտնուի շրջափակման մէջ, եւ այդ օգնութեան կարիքը հիմա առաւել քան կայ, որոշած են զայն շարունակել մինչեւ Դեկտեմբեր կամ առնուազն այնքան, որքան թոյլ կու տան շրջափակման պայմանները:

Աննան նշեց, որ ծրագրի մեկնարկին որոշած են, որ նուէր տուփերուն մէջ պիտի ներառեն Հայաստանի կամ Արցախի մէջ արտադրուած պարագաներ, ինչով պիտի խթանեն նաեւ հայրենական արտադրանքը: «Արցախի մէջ իմ լաւ ընկերներէս մէկը, որ խաղալիքներ կը պատրաստէ, համաձայնեցաւ պատրաստել նախագիծին խորհրդանիշը դարձած փայտէ ճնճողով: Նախքան նախագիծը սկսիլը ամիսներ շարունակ կը փնտռէինք հայկական արտադրութեան շրթեր, խաղալիքներ, խնամքի պարագաներ: Եւ, ի հարկէ, գտանք հայկական արտադրութեան բարձրորակ իրեր, որոնք ներառեցինք նուէր-տուփերու մէջ: Իրեր կային, որոնք Հայաստանի մէջ չէին արտադրուեր, օրինակ՝ տանկիներ կամ ջերմացափեր, անոնք ալ ձեռք կը բերին Հայաստանի մէջ», ըսաւ ան:

Աննա Աստուածատուրեան պատմեց, որ երբ կ'աշխատէին նախագիծի գաղափարին վրայ եւ կ'որոշէին ինչ

պարանքներ ներառել տուփին մէջ, շատերը կը հարցնէին, թէ ինչու կը կերտնան ամենալաւ ու որակեալ ապրանքներուն վրայ, բայց փախստականի ուղին չտեսած մարդոց համար դժուար էր հասկնալ իրենց. «Երբ ինքս փախստական էի ուրիշ երկրի մէջ, միշտ ես եւ եղբայրս ստիպուած էինք հազնիլ ուրիշին օգտագործած շորերը: Ես այդ զգացումները շատ լաւ կը յիշեմ: Հիմա, երբ ինձի կ'ըսեն, որ թանկարժէք իրերու փոխարէն տուփին մէջ կարելի է ներառել անելի շատ ապրանքներ, բայց անելի աժան, միշտ այդ անձնական զգացումը կ'անցնի մեջովս. փախստականները եւ պատերազմը սեփական մաշկի վրայ զգացած ընտանիքները նոյնպէս արժանի են ամենալաւին: Ինձի համար այս նախագիծը միայն նուիրատուութիւն չէ, այլ՝ նուէր Արցախի մէջ մնացած ընտանիքներուն, որոնք արժանի են խրախուսանքի՝ ուժեղ մնալու համար», ըսաւ ան:

Աստուածատուրեան ընդգծեց, որ այս ծրագիրը հնարաւորութիւն էր իր համար ոչ միայն աջակցելու Արցախին եւ Հայաստանի տնտեսութեան, այլ նաեւ սփիւռքը Արցախին կապելու:

«Ինձի համար ամենակարեւորը ոչ թէ օգնութիւնն էր (արցախցիները ստացած են եւ կը ստանան նիւթական օգնութիւն), այլ սփիւռքին ցոյց տալը, որ Արցախի մէջ կ'ապրին եւ կը ծնին մարդիկ, Արցախի մէջ բնակողներուն ցոյց տալը, որ սփիւռքը պատրաստ է իրենց աջակցելու: Ամենակարեւորը բարոյական աջակցութիւնն է, ուշադրութեան արժանացնելը եւ ուրախութեան ակնթարթներ պարգեւելը», ըսաւ ան:

Անդրադառնալով նոր ծրագիրներուն՝ Աննա Աստուածատուրեանը պատմեց, որ կը պատրաստուի հանդիպելու եւ զրուցելու Սիւնիքի մարզի ղեկավարութեան հետ, որպէսզի բնակարկէն նմանատիպ նախագիծը այնտեղ նոյնպէս իրականացնելու գաղափարը: Գաղափարը պիտի կրէ «Սեր Սիւնիք» խորագիրը:

«Ինձի համար շատ կարեւոր է, որ մարդիկ մնան Սիւնիքի մէջ, շատ երեխաներ ունենան: Յոյս ունիմ, որ այս օգնութիւնը պիտի շարունակուի, քանի որ սա հնարաւորութիւն է, որ մարդիկ շարունակեն մնալ Արցախի եւ Սիւնիքի մէջ:

Այս պահին Արցախի մէջ իրավիճակը բաւականին ծանր է, ու սփիւռքը շատ մտահոգուած է այս հարցով: Ես եկած եմ, որպէսզի այդտեղ խօսիմ մարդոց հետ ու հասկնամ իրավիճակը», ըսաւ ծրագրի ղեկավարը:

Աննա Աստուածատուրեանը նշեց, որ նախագիծը բաւականին մեծ գումարներ կը պահանջէ, քանի որ իւրաքանչիւր տուփը կ'արժեն 105 տուլար, եւ զայն շարունակելու նպատակով որեւէ աջակցութիւն հիմնադրամն համար շատ կարեւոր է:

ԵՐԵՄԼԻՆԻ ՄԵՋ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ ԵՆ, ՈՐ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՀԱՊԿ-Ի ԹԵՄԱՅՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԵՐԿԵՕՍՈՒԹԻՒՆԸ

Ռուս պիտի շարունակէ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) թեմայով Հայաստանի հետ երկխօսութիւնը: Նման յայտարարութիւն ըրած է Ռուսիոյ նախագահի մամուլի քարտուղար Տմիթրի Փետրովը՝ մեկնաբանելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի այն խօսքերը, որ ՀԱՊԿ-ն դուրս գալու հարցը Հայաստանի օրակարգէն դուրս չէ եկած:



«Ընդհանուր առմամբ, ՀԱՊԿ-ը անդամ երկիրներու շրջանակին մէջ հեղինակութիւն ունի, ցոյց կու տայ իր արդիւնաւետութիւնը տարբեր իրավիճակներու մէջ: Ինչ կը վերաբերի Հայաստանի վարչապետի յայտարարութեան, ապա մենք պիտի շարունակենք երկխօսութիւնը մեր հայ ընկերներուն հետ: Մենք անոնց հետ պիտի խօսինք նաեւ ՀԱՊԿ-ի գործունեութեան մեր հետագայ մասնակցութեան թեմայով», ըսած է Քրեմլինի խօսակարգը:

Փետրով յայտարարեց, որ ՀԱՊԿ-ը ունի հետագայ զարգացման ներուժ:

ՀՀ վարչապետը իրաւիք ունի ընթացքին յայտնած էր, որ «Հայաստանի Հանրապետութիւնը կրնայ տե-իւրէ որոշում կայացնել ՀԱՊԿ-ին անդամութիւնը դադարեցնելու կամ սառեցնելու վերաբերեալ, բայց այդ տեղի կ'ունենայ միայն այն պարագային, երբ արձանագրեց, որ ՀԱՊԿ-ը դուրս կու գայ Հայաստանէն»:

«ՄՈՒՐՈՒՄԵՆՈՒ ՀԵՏԵՄՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՅԱՅՏՈՒՄ ԱՏՐՊԷՅԱՆՅԻՆԵՐ ԱՅՍ ՊԱՇԻՆ ԳԿԱՆ»

(Շարունակուած Բ. էջէն)

դառնան: Բայց նաեւ կը հաստատեն, որ այս պահի դրութեամբ մոլորուած ըլլալու հետեւանքով Հայաստանի մէջ յայտնուած ատրպէյճանցիները չկան: Բոլոր ատրպէյճանցիները, որոնք այս պահին Հայաստանի մէջ են, անոնք իրենց որոշմամբ հատած են սահմանը՝ իմանալով, որ կը հատեն Հայաստանի հետ սահմանը», ըսաւ Փաշինեան:

ՀՀ վարչապետը նաեւ յայտարարեց, թէ ռեւէ ատրպէյճանցի, որ մոլորուած ըլլալու հետեւանքով կը յայտնուի Հայաստանի Հանրապետութեան մէջ, հեշտացուած կարգով հնարաւորինս արագ պիտի վերադարձուի Ատրպէյճանին: Բայց այս պահին այդպիսի քաղաքացիներ Հայաստանի մէջ չկան:

Վերջերս Ատրպէյճանի Չիւնուած ուժերու երկու զինուոր հատած էին Հայաստանի հետ սահմանը եւ յայտնուած՝ Հայաստանի տարածքին: Հայաստանի իրաւապահները զանոնք ձերբակալած են, սահմանը ապօրինի հատելու մեղադրանք առաջադրուած է անոնց: Ատրպէյճանցի զինուորներէն մէկը կը մեղադրուի նաեւ Չանգեզուրի պղնձամոլիպտենային գործարանին պահակը սպաննելու մէջ: Անդրադառնալով հարցին, թէ արդեօք կը բացառուի, որ Հայաստանի սահմանը հատած երկու ատրպէյճանցիներուն Հայաստանի պիտի արտայանձնէ՝ Փաշինեան ըսաւ, որ յարաբերութիւններու կարգաւորումը կարեւոր ու բարդ որոշումներու կայացում կը նախատեսէ, բայց այդ միակողմանի չի կրնար ըլլալ:

«Կյո՛ր, մենք պատրաստ ենք ընկարկելու, ի հարկէ իրական ընթացակարգերը անցնելէ յետոյ: Որովհետեւ միւս կողմէ մենք չենք կրնար ուղղակի անտեսել, որ Հայաստանի քաղաքացի սպաննուած է, բայց ռեւէ մէկուն անմեղութեան կանխաւարկածն ալ չենք խախտեր: Հարցը նախքան նուէր տուփին մէջ է», ըսաւ վարչապետը:

Ան նշեց, որ երբ դատարանը որոշում կայացնէ, անկէ յետոյ իրական ընթացակարգերը հնարաւոր կը համարեն ամենատարբեր լուծումներ:

ՏԵՂԱԿԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՍԱԼԱՄԷ...

(Շարունակուած Ա. էջէն)

Ռոնեցքան, որուն հետ ընկարկեց Լիբանանի հարաւային շրջանին մէջ տիրող իրավիճակը եւ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերուն հետ համագործակցութիւնը: Անդրադառնալով նախանցեալ օր հարաւի մէջ Հնդկապայտի կատարած զինավարժութեան, Միքայիլ քննադատեց այդ ցուցադրութիւնը, դատապարտելով պետութեան գերիշխանութեան որեւէ ոտնձգութիւն:

Իսկ Լիբանանեան ուժեր կուսակցութեան նախագահ Սամիր ժաւատա կարծիք յայտնեց, որ Հնդկապայտի զինավարժութենէն կը տուժէ Լիբանան եւ կ'օգտուի Իսրայէլ:



ԱՄԷՐԻԿԱՅԻ ՉԱՐՏԵՐ 20 ՏԱՐԵՎԱՆ ԲԱԺԱԿԻ Ա. ԳԱՆՏՐՈՒՄ ԱՐԺԱՆՔԻՆ ԵՒ ԻՏԱԼԻԱ ՅԱՂԹԵՑԻՆ

Արժանքների մարզադաշտերում վրայ սկսան Աշխարհի միջև 20 տարեկան տղոց ֆուտբոլի բաժնի մրցաշար-



քի մրցումները: Մասնակցող 24 հաւաքականները բաժնը-լեցան 6 խմբակներու: Դ. խմբակին մէջ, այս հանգրուանի ամենախեղաբերական մրցումին, Իտալիա դժուար յաղթանակ մը տարաւ Դրագիլի հաւաքականին նկատմամբ: Իտալիոյ Բ. դասակարգի «ՍՓԱԼ Ֆերրարա»-ի կիսապաշտպան Փրաթի 11-րդ, Անզիլոյ Բ. դասակարգի «Ռետինկ»-ի կիսապաշտպան Քաստելի 27-րդ, տուգանայինով՝ 35-րդ վայրկեաններուն նշանակեցին Իտալիոյ կողմը, յարձակող Փաֆուստի մէկ փոխանցումով: Իսկ Դրագիլի «Սանթոս»-ի Բ-խումբի յարձակող Մարքոս Լենարտո՝ 72-րդ, 87-րդ վայրկեաններուն նշանակեց Դրագիլի կողմը, փոխարինող յարձակող Մարքինոսի եւ փոխարինող յարձակող Սավիոյի փոխանցումներով: Ստորեւ տեսնել Ա. հանգրուանին արձանագրուած արդիւնքները.

- Ա. խմբակ. - Արժանքին - Իզպէրեստան 2-1
- Նոր Չեչանա - Կուաբեմալա 1-0
- Բ. խմբակ. - Սլովաքիա - Ֆիճի 4-0
- ԱՄՆ - Էքուատոր 1-0
- Գ. խմբակ. - Գոլոմպիա - Իսրայէլ 2-1
- Ճափոն - Սենեկալ 1-0
- Դ. խմբակ. - Իտալիա - Դրագիլ 3-2
- Նիկերիա - Տոմիւնթան 3-2

ԱՆՂԻՈՅ ԱՆՈՅԱՆՈՒԹԵԱՆ 37-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ ՄԱՆՉԵՍԹԸՐ ՄԻԹԻ ՇԱՅԵՑԱՒ ՏԻՏՐՈՒՄԸ

Անգլիոյ ֆուտբոլի ասոցիացիայի նախագիծին՝ 37-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, առաջատար «Մանչեսթըր Սիթի» իր դաշտին վրայ մրցեցաւ 12-րդ դիրքը գրաւող «Չելսի»-ի դէմ, արձանագրեց իր 28-րդ յաղթանակը, անհասանելի դարձաւ 2-րդ դիրքը գրաւող «Արսենալ»-ի



համար ու շահեցաւ տիտղոսը: Մրցումին միակ կողմ նշանակեց արձանագրեց յարձակող ժուլիան Ալվարեզ 12-րդ վայրկեանին, կիսապաշտպան Փալմըրի փոխանցումով: Իսկ 14-րդ դիրքը գրաւող «Ռեյսը հեմ Եունայթըտ» իր դաշտին վրայ մրցեցաւ 18-րդ դիրքը գրաւող «Լիծ Եունայթըտ»-ի դէմ ու յաղթանակ տարաւ: Մրցումի 17-րդ վայրկեանին, սպանացի յարձակող Ռոտրիկո յառաջ տարաւ «Լիծ»ը, ամբողջակա կիսապաշտպան Մաքքենիի փոխանցումով: Սակայն, կիսապաշտպան Ռայս՝ 32-րդ, յարձակող Պուոլըն՝ 72-րդ եւ փոխարինող արձանագրեցին կիսապաշտպան Լանզիի 90+4-րդ վայրկեաններուն նշանակեցին «Ռեյսը Զեմ Եունայթըտ» յաղթանակի կողմը, Պուոլընի, Իսկօի եւ Լուքաս Փաբլոնի փոխանցումներով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ռեյսը Զեմ Եուն. - Լիծ Եուն. 3-1
 - Պարաճըն Էստ Զոլ Ալպ. - Սաութհեմթըն 3-1
 - Մանչեսթըր Սիթի - Չելսի 1-0
- Դասաւորում. 1) Մանչեսթըր Սիթի 36 մ 88 կետ 93-31, 2) Արսենալ 81 կետ 83-43, 3) Նիւքեմբըլ Եուն. 36 մ 69 կետ 67-32, 4) Մանչեսթըր Եուն. 36 մ 69 կետ 52-41, 5) Լիվըրփոլ 66 կետ 71-43, 12) Չելսի 36 մ 43 կետ 36-42
- Ռմբարկուներ. 1) Է. Զալալանտ-Մանչեսթըր Սիթի 36 կոլ, 2) Բ. Զեյն-Ռոբընսոն 28 կոլ, 3) Ի. Թոնի-Պրենթըն 20 կոլ

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՆՈՅԱՆՈՒԹԵԱՆ 33-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ ՊՈՐՈՒՄԻԱ ՏՈՐԹՄՈՒՆ՝ ԱՌԱՋԱՏԱՐ

Գերմանիոյ ֆուտբոլի ասոցիացիայի նախագիծին՝ 33-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, առաջատար «Պայըն Միւնխ» իր դաշտին վրայ մրցեցաւ 3-րդ դիրքը գրաւող «ՌԴ Լայպցիգ»-ի դէմ: Թէեւ «Պայըն»-ն էր որ տիրապետեց, սակայն «Լայպցիգ»-ն էր աւելի արդիւ-

նաւտ կազմը: Մրցումի 25-րդ վայրկեանին, յարձակող Կնապի յառաջ տարաւ «Պայըն»ը, կիսապաշտպան Մուլլըրի փոխանցումով: Սակայն, աւստրիացի կիսապաշտպան Լայմըր՝ 64-րդ, ֆրանսացի յարձակող Նուլքու տուգանայինով՝ 76-րդ եւ Խուլսթրիացի կիսապաշտպան Շոպրիչայ տուգանայինով՝ 86-րդ վայրկեաններուն նշանակեցին «Լայպցիգ»-ի կողմը: «Պայըն Միւնխ» կրց իր 5-րդ պարտութիւնը: Առիթըն օգտուեցաւ 2-րդ դիրքը գրաւող «Պորուսիա Տորթմունտ»ը իր դաշտին դուրս յաղթել ետք 14-րդ դիրքը գրաւող «Աուկսպուրկ»ին ու գրաւեց առաջատարի դիրքը: Փոզուլտայն ափսոսանքի յարձակող Զալըր՝



58-րդ, 84-րդ եւ կիսապաշտպան Պրանտը 90+3-րդ վայրկեաններուն նշանակեցին «Պորուսիա»-ի կողմը, փոխարինող պաշտպան Շլոթըրպէի փոխանցումով: Իսկ յարձակող Սարգիս Ադամեանի մաս կազմած 11-րդ դիրքը գրաւող «ՖՍ Ելօլն» իր դաշտին դուրս հաւասարեցաւ 12-րդ դիրքը գրաւող «Վերտեր Պրեմըն»-ի հետ ու գրաւեց 10-րդ դիրքը: Ադամեան չմասնակցեցաւ այս մրցումին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ֆրայպուրկ - Վոլֆսպուրկ 2-0
- Յոֆենհայմ - Իւնիոն Պերլին 4-2
- Շալքե04 - Այլթախթ ֆրանք 2-2
- Վերտեր Պրեմըն - ՖՍ Ելօլն 1-1
- Պայըն Միւնխ - ՌԴ Լայպցիգ 1-3
- Աուկսպուրկ - Պորուսիա Տորթմունտ 0-3
- Պայեր Լեվերքուզըն - Պոր. Մետշնեկկատայա 2-2

Դասաւորում. 1) Պորուսիա Տորթմունտ 70 կետ 81-42, 2) Պայըն Միւնխ 68 կետ 90-37, 3) Լայպցիգ 63 կետ 60-39, 4) Իւնիոն Պերլին 59 կետ 50-38, 5) Ֆրայպուրկ 59 կետ 50-42

Ռմբարկուներ. 1) Ն. Ֆուլբրիկ-Վերտեր Պրեմըն 16 կոլ, 2) Ս. Կնապի-Պայըն Միւնխ 14 կոլ, 3) Վ. Կրիֆ-Ֆրայպուրկ 14 կոլ

ԱՅՍՈՐՈՒՄԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ ԱՇԽԱՐՀԻ ՄԻՆՉԵՐ 20 ՏԱՐԵՎ. ԲԱԺԱԿԻ 2-ՐԴ ԳՆԱԳՐ.

- 21:00 Իզպէրեստան (3) - Նոր Չեչանա (2)
 - 21:00 ԱՄՆ (2) - Ֆիճի (4)
 - 00:00 Արժանքին (1) - Կուաբեմալա (4)
 - 00:00 Էքուատոր (3) - Սլովաքիա (1)
- ԸՈՓԱ ԼԻՊԵՐԱՏՈՐԵՍԻ ԽՍՐ. 4-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ**
- 01:00 Մոնակո (4) - Բոլո Ելո (3)
 - 01:00 Աթլէթիքո Միլեթո (3) - Աթլէթիքո Փարանսէս (1)
 - 03:00 Աուքաս (3) - Ռասինկ (1)
 - 03:00 Իստիփ. Մետելին (3) - Նասիոնալ (1)
 - 03:00 Պոլիվար (1) - Պարսելոնա (3)
 - 05:00 Ալիանցա Լիմա (2) - Լիպերթատ (4)
- ԸՈՓԱ ՍԻՏԱՄԵՐԻԵՆԱՍԻ ԽՍՐ. 4-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ**
- 01:00 ժիմնագիա Լա Փաթա (4) - Իստիփ.Սանթա Ֆէ (3)
 - 01:00 Կոյաս (2) - Ունիվերսիթարիո (1)
 - 03:00 Մակալանսե (3) - ԼՏՈւ Զուրթո (1)
 - 03:00 Ամերիքա Միլեթո (3) - Տեֆենսա Ի ժուսիսիա (2)
 - 03:30 Աքատ. Փուրթո Քապեյո (4) - Սաս Փաուլո (1)
 - 05:00 Միլոնարիոս (1) - Փենիարոլ (2)
- ՊԱՍԵԹՊՈՒԷՆ ԵՒ ՊԻՒՆՅՈՒՆ 4-ՐԴ ՄՐՅՈՒՄ**
- 03:30 Մայամի Զիթ (8) - Պոսթըն Սելթիքս (2)
- ԹԵՆԻՍԻ ԺՆՆԵՒԻ ՄՐՅԱԸ. 1/16-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ ՅԵՏԵԱՆՐԵՍԱՒ**
- 10:00-Էն սկստաւ, «beinsports» կայանէն
 - 12:00 GIRO D'ITALIA շրջափազգ, «eurosport» կայանէն

ՊԱՍԵԹՊՈՒՆ ԵՆՈՐՈՒԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՌԵԱՄԱՏՐԻՑ ՇԱՅԵՑԱՒ ՏԻՏՐՈՒՄԸ

Տեղի ունեցան Եւրոպայի պապեթպոլի տղոց առաջակարգ ակումբներու՝ Եւրոլիկի աւարտական հանգրուանի մրցումները, Լիթուանիոյ Քաունաս քաղաքի «ժակիրիս



Արենա» մարզադաշտին վրայ: Երրորդ դիրքի մրցումին, Ֆրանսայի «ԱՍ Մոնպօ»-ն յաղթեց Սպանիոյ «Պարսելոնա»-ին: Իսկ աւարտական մրցումին, «Ռեալ Մատրիտ» յաղթեց Յունաստանի «Օլիմպիակոս Փիրէոս»-ին ու շահեցաւ տիտղոսը: «Օլիմպիակոս»-ի ամենալաւ նշանակողն էր յոյն ֆորուդտ Սաշա Վեզլեթով՝ փըրֆորմընս ինտըքս 34, իսկ «Ռեալ Մատրիտ»-ի ամենալաւ նշանակողն էր սպանացի կարտ Սերժիո Ռոտրիկեզ՝ փըրֆորմընս ինտըքս 23: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

3րդ դիրք. - Պարսելոնա (Սպ.) - ԱՍ Մոնպօ (Ֆր.) 66-78
Աւարտական. - Օլիմպիակոս Փիրէոս (Յուն.) - Ռեալ Մատրիտ (Սպ.) 78-79

«ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՏԱՐԱԾԸ ԿԸ ՆԵՐԱՌԷ ՆԱԷՒ ԱՐՃԱԽԸ»

(Շարունակուած Ա. Էջէն)

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան դժգոհութիւն յայտնեց, որ բանակցութիւններուն զուգահեռ Ատրպէյճան կը շարունակէ Հայաստանի ինքնիշխան տարածքի բռնագրաւումը: Միացեալ Թագաւորութեան Եւրոպայի հարցերով պետական նախարարին հետ տեսակցութենէն ետք, Միրզոյեան պահանջեց վերացընել Լաշինի միջանցքին արգելափակումը, զայն համարելով ցեղային գտումի բաղադրականութեան մէկ մասը: Ան միջազգային ընտանիքէն պահանջեց վճարող ջայլեր եւ բոլոր գերիներու ազատ արձակում: Խօսելով Ուաշինկթօնի մէջ տեղի ունեցած բանակցութիւններուն մասին, Միրզոյեան նշեց, որ այնտեղ համաձայնութիւն գոյացած է խաղաղութեան պայմանագրի նախագիծի եւս երկու յօլաճի շուրջ:

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՆ ԱՐՑԱԿԵՆ

Վարչապետ Փաշինեանի մամուլ ասուլիսին հիման վրայ, Արցախի Ազգային ժողովը երէկ կէս գիշերին գումարեց արտակարգ նիստ մը՝ քննարկելու հրատապ հարցերը: Արցախի Հանրապետութեան նախագահի յատուկ յանձնա-



րարութիւններու հարցով խորհրդական, արտաքին գործերու նախկին նախարար Դաւիթ Պապայեան յայտնեց, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան չի կրնար ուղղակի յայտարարել Արցախը Ատրպէյճանին յանձնելու մասին եւ յառաջ շարժիլ, այլ պարտաւոր է իրաւական փաթեթաւորումով մշակել փաստաթուղթ եւ զայն Ազգային ժողովին մէջ վաւերացնել բաց քուէարկութեամբ: «Այդ ժամանակ կը ծանօթանանք մեր հերոսներուն եւ պատ-



մութիւնը չի մոռնար անոնց անունը», ըսաւ Պապայեան: Ան բացատրեց, որ եթէ Հայաստանի ժողովուրդը համաձայնի այդ փաստաթուղթին, ապա Հայաստան եւս կը դադոր գոյութիւն ունենալ:

Իսկ Արցախի պետական նախարարի խորհրդական Արտակ Բեգլարեան յայտնեց, որ Արցախի ճակատագիրը կը վճռէ միայն հանրապետութեան քաղաքացիները: «Նոյնիսկ եթէ Հայաստանն ու Ատրպէյճանը պայմանաւորուին սահմանազատում եւ սահմանազծում կատարելու համար հիմք ընդունիլ խորհրդային միութեան ներքին վարչական սահմանները, այդ տակաւին չի նշանակել Արցախի ժողովուրդի ինքնորոշումի իրաւունքի բացառում», ըսաւ Բեգլարեան: Ան անընդունելի համարեց



Արցախը Ատրպէյճանի կազմին մէջ ճանչնալու մասին Հայաստանի պաշտօնատարներու յայտարարութիւններն ու գործողութիւնները:

Արցախի պետական նախարար Գուրգէն Ներսիսեան յայտնեց, որ պայքարը կը շարունակուի սեփական հողի վրայ արժանապատիւ եւ ազատ ապրելու համար:

Միւս կողմէ, Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ յայտնեց, որ Հայաստանի հետ խաղաղութեան համաձայնագրի ստորագրումը անխուսափելի է:

ARARAD DAILY NEWSPAPER
 MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
 Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
 Beirut | Lebanon | www.araraddaily.com
 email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية ارمينية | المحبرة المسؤولة: أني صرافيان
 تصدر عن شركة مسيسر المملكة والنشر (ش.م.م)